



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հուլիսի 2024թվականի N 817

ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ
 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ և 12-րդ կետերի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հայտերը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Տրամադրել թույլտվություններ համաձայն հավելվածի.

-համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի,

-հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների իրացման և հանրային սննդի կազմակերպման,

-լցակայաններին սեղմված բնական գազի, հեղուկ վառելիքի և հեղուկացված նավթային գազերի վաճառքի,

-լցակայանին ժամը 24-00-ից հետո աշխատելու,

-արտաքին գովազդի տեղադրման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՆԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

10 հուլիսի 2024թ.
 ք.Հրազդան



ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անվանումը/անուն, ազգ անուն/ կամ կազմակերպարավական անուն	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գրվագրի մակերեսը՝ քառ/մ	Տեղական տուրքի տեսակը, սահմանված վճարը (դրամ)	Թույլտվության ստանդարտի ժամանակահատվածը, մուծված վճարը (դրամ)
1	Ա/Ձ Մանուշակ Վարդերեսյան	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 88/34	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 84/1	47 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	նգբից խմիչքների վաճառք, 11000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
2	Ա/Ձ Մանուշակ Վարդերեսյան	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 88/34	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 84/1	առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախտոային արտադրատեսակների կամ ծխախտոային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախտոային արտադրատեսակների նմանակների վաճառք, 11000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
3	Ա/Ձ Մարիամ Մեղրոնյան	Հրազդան համայնք գյուղ, Լեռնամիտ տուն 35	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 2ենք 8, 1-ին հարկ շինություն	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	նգբից խմիչքների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
4	Ա/Ձ Մարիամ Մեղրոնյան	Հրազդան համայնք գյուղ, Լեռնամիտ տուն 35	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 2ենք 8, 1-ին հարկ շինություն	առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախտոային արտադրատեսակների կամ ծխախտոային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախտոային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
5	Ա/Ձ Զինա Խուրշուդյան	Հրազդան համայնք գյուղ, Քարլի	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 105/1	48 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	նգբից խմիչքների վաճառք, 11000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
6	Ա/Ձ Զինա Խուրշուդյան	Հրազդան համայնք գյուղ, Քարլի	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 105/1	48 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախտոային արտադրատեսակների կամ ծխախտոային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախտոային արտադրատեսակների նմանակների վաճառք, 11000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 11000
7	Ա/Ձ Հասմիկ Հովհաննիսյան	Հրազդան համայնք գյուղ, գյուղ Սուլակ	Հրազդան համայնք գյուղ, գյուղ Սուլակ, 1-ին փ., 49/2	98 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	նգբից խմիչքների վաճառք, 16000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 16000

8	Ա/Ձ Հասմիկ Հովհաննիսյան	Հրազդան համայնք գյուղ, գյուղ Սուպ	Հրազդան համայնք գյուղ, գյուղ 1-ին փ., 49/2	98 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ձխախտային արտադրատեսակների կամ ծխախտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ձխախտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 14000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 14000
9	«ՍԻԹԻ» ՍՊԸ	Ք. Երևան, Օհանյանի 15/1	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 187	500 մ ավելի քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	նզելից խմիչքների վաճառք, 70000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 70000
10	«ՍԻԹԻ» ՍՊԸ	Ք. Երևան, Օհանյանի 15/1	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 187	500 մ ավելի քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ձխախտային արտադրատեսակների կամ ձխախտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ձխախտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 60000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 60000
11	«ՍԻԹԻ» ՍՊԸ	Ք. Երևան, Օհանյանի 15/1	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 66	500 մ ավելի քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	նզելից խմիչքների վաճառք, 70000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 70000
12	«ՍԻԹԻ» ՍՊԸ	Ք. Երևան, Օհանյանի 15/1	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 66	500 մ ավելի քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ձխախտային արտադրատեսակների կամ ձխախտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ձխախտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 60000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 60000
13	«ՍԻԹԻ» ՍՊԸ	Ք. Երևան, Օհանյանի 15/1	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 66	47 քառ/մ, հանրային սենդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սենդի իրացում՝ 10000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 10000
14	«ՔԱՂՅՈՒ ԱՐՋՈՒԿ» ՍՊԸ	Ք. Երևան	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Օգոստոսի 62/1	98 քառ/մ, հանրային սենդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սենդի իրացում՝ 13000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 13000
15	«ԱԱՏԱՆ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 4-րդ փողոց 20/5-20/6	498 քառ/մ, հանրային սենդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սենդի իրացում՝ 30000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 30000
16	Ա/Ձ Սասուն Մկրտչյան	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 93	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 93	24 քառ/մ, հանրային սենդի օբյեկտ՝ հիմնական շինություն	նզելից խմիչքների իրացում, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
17	Ա/Ձ Սասուն Մկրտչյան	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 93	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի պողոտա 93	24 քառ/մ, հանրային սենդի օբյեկտ՝ հիմնական շինություն	հանրային սենդի իրացում՝ 5000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 5000
18	Ա/Ձ Արմեն Աղասարյան	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 1 4-րդ փողոց 38 տուն	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 1 4-րդ փողոց 38 տուն	24 քառ/մ, հանրային սենդի օբյեկտ՝ հիմնական շինություն	նզելից խմիչքների իրացում, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
19	Ա/Ձ Սեդրակ Դավթյան	Հրազդան համայնք, գյուղ Քարլի	Հրազդան համայնք, գյուղ Քարլի 17	Երկաթաբեր հանքային ջրերի օբյեկտ՝ հիմնական շինություն	ժամը 24-00-ից հետո աշխատանք, օրացուցային տարվա համար՝ 50.000 դրամ	2024 թվականի օրացուցային տարվա համար՝ 50.000
20	Ա/Ձ Սեդրակ Դավթյան	Հրազդան համայնք, գյուղ Քարլի	Հրազդան համայնք, գյուղ Քարլի 17	Երկաթաբեր հանքային ջրերի օբյեկտ՝ հիմնական շինություն	հեռուկ վառելիքի վաճառք, օրացուցային տարվա համար՝ 200.000 դրամ	2024 թվականի օրացուցային տարվա համար՝ 200.000

21	Ա/Յ Սեդրակ Դավթյան	Հրազդան համայնք, գյուղ Քաղաքի	Հրազդան համայնք, գյուղ Քաղաքի, 6 նրբ., թիվ 17	Իցակայան՝ հիմնական շինություն	հերոկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք, օրացույցային տարվա համար՝ 200.000 դրամ	2024 թվականի օրացույցային տարվա համար՝ 200.000
22	«ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ	Ք. Հրազդան Վանատուր Վանատուր թ-ս 585	Ք. Հրազդան Վանատուր թ-ս 585	Իցակայան՝ հիմնական շինություն	հերոկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք, օրացույցային տարվա համար՝ 200.000 դրամ	2024 թվականի օրացույցային տարվա համար՝ 200.000
23	«ՎԱՂԱՐՇ» ՍՊԸ	Ք. Հրազդան Վանատուր թ-ս 585	Ք. Հրազդան Վանատուր թ-ս 585	Իցակայան՝ հիմնական շինություն	Սեղնված բնական գազի վաճառք, օրացույցային տարվա համար՝ 200.000 դրամ	2024 թվականի օրացույցային տարվա համար՝ 200.000
24	Ա/Յ Գոհար Եգորյան	Ք. Հրազդան Չարենցի փ3	Ք. Հրազդան Կենտրոն թ-ս 2. Անդրանիկի պ 8	Իցակայան՝ հիմնական շինություն	հերոկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք, օրացույցային տարվա համար՝ 200.000 դրամ	2024 թվականի օրացույցային տարվա համար՝ 200.000
25	«ԴԻՈՒՍՏԻ ԱՆԻ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, գյուղ Աղավաճոր	Ք. Հրազդան Հրազդան-Զուլպեր-Դոմաշեն ավտոճանապարհի 4	Իցակայան՝ հիմնական շինություն	հերոկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք, օրացույցային տարվա համար՝ 200.000 դրամ	2024 թվականի օրացույցային տարվա համար՝ 200.000
26	Ա/Յ Սասուն Մկրտչյան	Ք. Հրազդան, 2. Անդրանիկի պողոտա 93	Ք. Հրազդան, 2. Անդրանիկի պողոտա 93	1 քառ/մ գույք 1 քառ/մ-1500 դրամ գույքային վահանակ	արտաքին գույք 1 քառ/մ-1500 դրամ	2024 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների համար, 4500



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հուլիսի 2024թվականի N 818

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԶԷ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հուլիսի 2024 թվականի N 819

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ հաստատված հավելվածով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:

2. Հաստատել Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման անցկացման վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկման անցկացումը հանձնարարել Հրազդանի համայնքապետարանի գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ-զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:

4. Հրազդանի համայնքապետարանի գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ-զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանին հանձնարարել՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման անցկացման վերաբերյալ հայտարարության տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:

5.Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ-զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

11 հուլիսի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թվականի հուլիսի 11-ի

№ 810 որոշման



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2024 թվականի հուլիսի 15-ից մինչև հուլիսի 29-ը ներառյալ կազմակերպվող Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկմանը:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2024 թվականի հուլիսի 29-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկման ընթացքում՝ 2024 թվականի հուլիսի 30-ին ժամը 15:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060704010 հեռախոսահամարով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2024թվականի N 820

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Երևան քաղաքի Արաբկիր Ադոնցի փողոց 17/1 շենքի 38 բնակարանի բնակիչ Լյոնյա Սամվելի Գևորգյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված ՀՀ-ում գործածվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից (VXSOFIT ծրագիր) ստացված տեղեկանքի DODGE DURANGO V8 մակնիշի 08 OS 074 հաշվառման համարանիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Լյոնյա Սամվելի Գևորգյանին և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 397044 (երեք հարյուր իննսուներեք հազար քառասունչորս) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 347400 (երեք հարյուր

քառասունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ 2021-2024թթ. ապառքի գումար և 49644 (քառասունինը հազար վեց հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ 2021-2023թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի հունիսի 7-ին ժամը 16:00-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ 22.05.2024թ. առաքանի N LO122808944AM) Լյոնյա Սամվելի Գևորգյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ է համարվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը:

Օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 248-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փոխադրամիջոցի գույքահարկը հաշվարկվում է Օրենսգրքի 243-րդ հոդվածով սահմանված հարկման բազայի և Օրենսգրքի 244-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերի բազմապատկումով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 245-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 249-րդ հոդվածի դրույթները:

Օրենսգրքի 251-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-

ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Լյոնյա Սամվելի Գևորգյանից հոգուտ Հրազդան համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 397044 (երեք հարյուր իննսունյոթ հազար քառասունչորս) ՀՀ դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



12 հուլիսի 2024թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2024թվականի N 821

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.

Արտաշատ համայնքի Մրգանուշ բնակավայրի Հ. Շիրազի փողոց 13 տան բնակչուհի Պարզուհի Սամվելի Մալխասյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված ՀՀ-ում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից (vector+ ծրագիր) և անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից (VXSOFIT ծրագիր) ստացված տեղեկանքների Հրազդան համայնքի Հարավային թաղամասում 07-001-0259-0015 կադաստրային ծածկագրով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Պարզուհի Սամվելի Մալխասյանին և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս

հասցեում գտնվող հողամասի համար հողի հարկի գծով 52461 (հիսուներկու հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 35394 (երեսունհինգ հազար երեք հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ 2009-2020թթ. ապառքի գումար և 17067 (տասնյոթ հազար վաթսունյոթ) ՀՀ դրամ 2009-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս հասցեում գտնվող հողամասի համար անշարժ գույքի հարկի գծով 27032 (քսանյոթ հազար երեսուներկու) ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 24256 (քսանչորս հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ 2021-2024թթ. ապառքի գումար և 2776 (երկու հազար յոթ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ 2021-2023թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի հունիսի 7-ին ժամը 15:00-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ 22.05.2024թ. առաքանի N LO122808446AM) Պարզուհի Սամվելի Մալխասյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգրք) 6-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝ անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար Օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված է հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...:

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները (հողամասերում կառուցված ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները):

Օրենսգրքի 226-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը: Օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը: Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի

հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պարտավորություններ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Պարզուրի Սամվելի Մալխասյանից հոգուտ Հրազդան համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 79493 (յոթանասունհինը հազար չորս հարյուր հինսուն երեք) ՀՀ դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2024թվականի N 822

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳՈՒՄԱՐԸ
ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի է) կետով և հիմք ընդունելով Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 15 շենքի 19 բնակարանի բնակիչ Արամ Ավանեսյանի 2024 թվականի հուլիսի 1-ի N 5053 դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001256 հաշվեհամարին, որպես պետական տուրք վճարված 5.000 /հինգ հազար/ դրամ գումարը հետ վերադարձնել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 15 շենքի 19 բնակարանի բնակիչ Արամ Ավանեսյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 հուլիսի 2024թ.
 ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2024թվականի N 823

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻՆ
 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը, անհատ ձեռնարկատերերի հայտերը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.Տրամադրել թույլտվություններ համաձայն հավելվածի.
 -համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի,
 - հանրային սննդի օբյեկտներում՝ հանրային սննդի կազմակերպման:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

12 հուլիսի 2024թ.
 ք.Հրազդան





Ցուցակ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպչի անվանումը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գույքագրի մակերեսը՝ քառ/մ	Տեղական տուրքի տեսակը, սահմանված վճարը (դրամ)	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը, մուծված վճարը (դրամ)
1	Ա/Ձ Մարինե Կիրակոսյան	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 35/6	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 35/1	98 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից խմիչքների վաճառք, 16000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 16000
2	Ա/Ձ Մարինե Կիրակոսյան	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 35/6	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 35/1	98 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 14000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 14000
3	Ա/Ձ Հայկանուշ Հազյան	Ք.Հրազդան Տիգրան Մեծի 9	Ք.Հրազդան Տիգրան Մեծի 9	48 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից խմիչքների վաճառք, 11000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար, 22000
4	Ա/Ձ Հայկանուշ Հազյան	Ք.Հրազդան Տիգրան Մեծի 9	Ք.Հրազդան Տիգրան Մեծի 9	48 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 11000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար, 22000
5	Ա/Ձ Սոնյա Ալեքսանյան	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 103/55	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս <Ս հանրակացարաններին հարող տարածք	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ոգելից խմիչքների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
6	Ա/Ձ Սոնյա Ալեքսանյան	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս 103/55	Ք.Հրազդան Կենտրոն թ-ս <Ս հանրակացարաններին հարող տարածք	24 քառ/մ, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք, 7000 դրամ (եռամսյակի համար)	2024 թվականի երրորդ եռամսյակի համար, 7000
